Հայք ետուն պատասխանի.

1°.—Զհրովարտակն, զոր ետուն բերել Յոյնք, ոչ է տեսեալ մեր, և ոչ ընթերցեալ 'ի Դատարանի, և մեք ոչ երբէք հակառակ կացեալ եմք նմին, զի չէ օրէն հպատակ ազգի անասատել հրամանի Տէրութեան, եթէ հարցցի ցԳվխաւորս քաղաքին, յայտնի լինի ճշմարտութիւնն եւ ստութիւնն։ Մին 'ի խնդրոց, զորմէ ամբաստանեն Յոյնք՝ է Տաճարն Ս. Յարութեան, ուր ոչ է լեալ նորոգութիւն և զարդարանք։

2°.—Եկեղեցին Բեթղեհէմի, Հիւսիսային կողմն յատկացեալ Հայոց, և բաժանորդ Ա.յրն, յայսոսիկ տեղիս եւս չէ լեալ նորոգութիւն ինչ՝ այլ թերի մնացեալ 'ի բաժանորդութենէ, կախեալ եմք քանի մի պատկեր և կանթեղ՝ քննութեամբ Օմար Նասիպ Նախկին Դատաւորի և այլազգեաց քաղաքիս, և ոչ եղեւ ինչ 'ի ժամանակս Համուդլահ Դատաւորի։ Սուտ է և այն բոլորն Յունաց, թէ Հայք դրունս բացին յեկեղեցին Բեթղեհէմի։

3°.—Լեառն Ձիթենեաց. յետ լրանալոյ խնդրոյն Բեթղեհէմի, տացուք պատասխանի եւ վասն այնր յիւրում տեղւոջ։

Փոխանորդն Յունաց՝

1°.—Այս է պատճառն ոչ ընթեռնլոյ հրովարտակին մերոյ 'ի դատարանի՝ ընթերցաւ յառաջագոյն հրովարտակն Լատինաց վասն Համարձման տեղւոյն, եւ Դատաւորն խոստացաւ գործադրել զայն, ապա զիջեալ յաղաչանս Հայոց՝ զանց արար զնովաւ. եթէ հարցցի ցգվխաւորս քաղաքին՝ որք էին 'ի նմին ժողովի՝ յայտնի ճշմարտութիւնն։ Եւ 'ի ժամանել հրովարտակին մերոյ՝ կոչեալ զԲեթխուտայ էֆէնտի տուաք նմա ընթեռնուլ զայն, և նա ծանոյց Դատաւորին զբովանդակութիւն նորին, յետ որոյ ետես եւ Դալրասլեան, նոյնպէս և նա յայտ արար նմա, բայց նա ոչ ընկալաւ, միջնորդ կացուցաք զՍալի Միւհսին էֆէնտի՝ չեղեւ ինչ օգուտ, երկիցս գնացեալ առ Դատաւորն խընդրեցաք զգործադրութիւն հրովարտակին, զառաջինն խընդրեաց 200,000 դահեկան, և յերկրորդումն 100,000. թէպէտ խոստացաք տալ նմա 30,000 ըրր ծախք Իլամի եւ Հէօճճէթի, այլ նա ոչ հաճեցաւ, և գործն մեր եղեւ այն-